ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1149, գ. Փարաքար Նաիրի 42
Հեռ. 0231 6-00-42, 060 53-00-42

E-mail paraqar.armavir@ mta.gov.am
paraqar@rambler.ru, www.parakar.am

11.08.2022 թ. N 1438

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Հովհաննիսյան

Ուղարկվում է Փարաքար համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 11-ի << ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու մասին>> N 259-Ա որոշումը և մրցույթի հայտարարությունները:

Հարգանքով՝
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Կատ.՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 թվականի N 259-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 13-Ն հրամանի 11 կետով. ***որոշում եմ՝***

1. 2022 թվականի սեպտեմբերի 13-ին նշանակել և անցկացնել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթներ.

1) ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-3) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2022 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 10:30-ին Փարաքար գյուղի Նաիրի փողոց թիվ 42 հասցեում.

2) ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի տեղակալ (ծածկագիր՝ 2.2-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2022 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 12:30-ին Փարաքար գյուղի Նաիրի փողոց թիվ 42 հասցեում.

2. Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գայանե Մանուկյանին՝ կազմել մրցույթի հայտարարության տեքստերը և այն հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում և համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների նախապատրաստական աշխատանքներն իրականացնել <<Համայնքային

ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, հանձնաժողովի աշխատակարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
3. Մրցույթների անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար Աննա Կոստանյանին:
4.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 11
գ.Փարաքար